



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

**Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

**Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1**

«            » մայիսի 2019 թ.

N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-114-23.04.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱԶԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ  
(Պ-114-23.04.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ դիտարկումները:

**1. Հարկային գաղտնիք չհամարվող տեղեկությունների շրջանակն ընդլայնելու առաջարկության վերաբերյալ**

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ հարկային գաղտնիք չեն համարվում նաև՝

- 1) հարկ վճարողի եկամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը.
- 2) հարկ վճարողի կողմից վճարված հարկերի և տուրքերի, ինչպես նաև ակտիվների վերաբերյալ տեղեկատվությունը.
- 3) հարկ վճարողի կողմից հայտարարագրված աշխատողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը.
- 4) ընկերության հարկային ռեժիմի վերաբերյալ տեղեկատվությունը.
- 5) հարկ վճարողի կամ հարկ վճարողի գործունեության վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային կամ մաքսային մարմիններին ներկայացվող տեղեկությունները:

Ընդհանուր առմամբ հրապարակային և հաշվետվողական գործելաճը խրախուսելի է, քանի որ այն նպաստում է հանրային վերահսկողության հնարավորությունների ընդլայնմանն ու վստահության ամրապնդմանը: Այդուհանդերձ, նախագծով ներկայացված վերոնշյալ առաջարկություններն ունեն խնդրահարույց կողմեր:

1) Տնտեսավարող սուբյեկտների հաշվետվողականության ու գործունեության թափանցիկության աստիճանը բարձրացնելու հիմնավորմամբ, նրանց վերաբերող՝ հանրային հետաքրքրություն ձևավորող տեղեկատվությունը հարկային գաղտնիք չհամարելու առաջարկության քննարկման համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ տնտեսավարող սուբյեկտների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հանրայնացնելու հետ կապված հարաբերությունները հիմնականում

կարգավորվում են այլ՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտը կարգավորող օրենսդրությամբ, իսկ հարկային օրենսդրությամբ, մասնավորապես, հարկային գաղտնիքին վերաբերող կարգավորումներով, տրամագծորեն հակառակ խնդիրն է լուծվում՝ կապված հարկ վճարողին վերաբերող և հարկային մարմինն հայտնի դարձած տեղեկատվությունը՝ որոշակի բացառություններով, որպես հարկային գաղտնիք որակելու և պահպանելու հետ: Մասնավորապես՝ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված՝ խոշոր կազմակերպությունների կողմից ֆինանսական հաշվետվությունները պարտադիր հրապարակելու օրենսդրական պահանջի շրջանակներում հրապարակման ենթակա են այդ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթները, որոնք ներառում են կազմակերպությունների ֆինանսական վիճակը, ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալի շարժը, դրամական միջոցների հոսքերը բնութագրող համապարփակ ցուցանիշներ, ինչպես նաև՝ ավելի մանրամասնեցված տեղեկատվություն ծանոթագրությունների տեսքով: Գտնում ենք, որ տեղեկատվության այս շրջանակը հաշվետվողականության ու թափանցիկության ապահովման տեսանկյունից ավելի օգտակար է՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունը հարկային մարմինն հայտնի է դառնում հիմնականում հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներից, որոնցում հայտարարագրվում են առավելապես հարկային հաշվառմանն առնչվող տեղեկություններ, իսկ տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր արտադրատնտեսական կամ ֆինանսական գործունեությանը վերաբերող տեղեկատվությունը, որը ենթակա է հրապարակման հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված կարգով, հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներում բացակայում է:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասի համաձայն՝ տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար,

բ) 2-րդ մասի համաձայն՝ տեղեկությունները, որոնք չեն կարող ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով,

գ) 3-րդ մասի համաձայն՝ ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը պաշտպանվում է նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված եղանակներով:

Այս առումով գտնում ենք, որ նախագծով առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 63-րդ կետի համաձայն՝ հարկային գաղտնիք չհամարվող տեղեկությունների ցանկը լրացնել այնպիսի տեղեկատվությամբ (մասնավորապես՝ հարկ վճարողի եկամուտների և ծախսերի, ակտիվների վերաբերյալ տեղեկատվությունը), որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածի համաձայն՝ համարվում է առևտրային գաղտնիք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ հարկ վճարողի եկամուտների, ծախսերի և ակտիվների վերաբերյալ տեղեկատվությունը հարկային գաղտնիք չհամարելը չի կարող էականորեն նպաստել տնտեսավարող սուբյեկտների հաշվետվողականության և թափանցիկության ապահովմանը և փոխարենը կարող է հակադրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ առևտրային գաղտնիքի պահպանման տրամաբանությանը:

2) Տնտեսավարող սուբյեկտների աշխատողների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակելու առաջարկության կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը, իսկ 19-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալներ մշակողները կամ նույն օրենքով նախատեսված այլ անձինք պարտավոր են պահպանել անձնական տվյալների գաղտնիությունը ինչպես անձնական տվյալները մշակելու հետ առնչվող ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո: Բացի այդ, նույն օրենքի համաձայն՝ անձնական տվյալները կարող են հրապարակվել տվյալների սուբյեկտի համաձայնությամբ:

Հետևաբար, աշխատողների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է հրապարակվել, եթե այն չի պարունակում աշխատողի վերաբերյալ անհատական տվյալներ և այդ կապակցությամբ նախագծում անհրաժեշտ է կատարել համապատասխան լրացում:

3) Ընկերության հարկային ռեժիմի վերաբերյալ տեղեկատվությունը հարկային գաղտնիք չհամարելու առաջարկության կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքն արդեն իսկ որոշակի

հնարավորություններ ընձեռում է հարկ վճարողի կողմից ընտրված հարկման համակարգը փնտրելու և գտնելու համար (մասնավորապես՝ ԱԱՀ վճարող համարվող լինելու կամ չլինելու առումով): Այս առումով սկզբունքորեն դեմ չլինելով նախագծով առաջարկվող նշյալ լրացումը կատարելուն՝ առաջարկում ենք այն ևս մեկ անգամ քննարկել՝ խուսափելու համար օրենսգրքում ավելորդ լրացումներ կատարելուց:

Միևնույն ժամանակ պարզ չէ, թե ինչու է այս լրացումն առաջարկվում միայն ընկերության համար, այն պարագայում, երբ օրենսգրքի համաձայն՝ հարկ վճարողներ կարող են լինել ինչպես կազմակերպությունները (օրենսգրքում «ընկերություն» հասկացություն ընդհանրապես չկա), այնպես էլ ֆիզիկական անձինք:

4) Ինչ վերաբերում է միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի հիման վրա այլ պետությունների հարկային մարմիններին փոխանցվող տեղեկությունները հարկային գաղտնիք չհամարելու առաջարկությանը, ապա այդ կապակցությամբ հարկ ենք համարում ընդգծել, որ օրենսգրքի համաձայն՝ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի հիման վրա այլ պետությունների հարկային մարմիններին ներկայացվող տեղեկությունները հարկային գաղտնիք չեն համարվում այդ մարմիններին ներկայացվելու դեպքում միայն: Նախագծով, սակայն, առաջարկվում է հանել վերջին պայմանը, ինչը նշանակում է, որ հարկային գաղտնիք չի համարվի, և հետևաբար, Հայաստանի Հանրապետությունում նույնպես հրապարակման ենթակա կլինի այն տեղեկությունը, որը միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրի հիման վրա փոխանցվել է այլ պետության հարկային մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ այս մասով ներկայացված առաջարկությունը համարում ենք աննպատակահարմար և առաջարկում ենք օրենսգրքով սահմանված կարգավորումը թողնել անփոփոխ:

***2. Հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցման ենթակա ներկայացուցչական ծախսերի չափերը վերանայելու առաջարկության վերաբերյալ***

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս՝ համախառն եկամտից չի նվազեցվում ներկայացուցչական ծախսերի այն մասը, որը գերազանցում է հարկային տարվա համախառն եկամտի 1 տոկոսը՝ ներկայումս սահմանված 0.5

տոկոսի կամ հինգ միլիոն դրամի փոխարեն: Առաջարկվում է սահմանել նաև, որ պետական գրանցման կամ հաշվառման տարվա ընթացքում ներկայացուցչական ծախսերի 1 տոկոսի սահմանաչափը հաշվի չի առնվում: Միաժամանակ առաջարկվում է սահմանել, որ ներկայացուցչական ծախսերի նվազեցման նպատակով հիմք կարող է հանդիսանալ նաև հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի առկայությունը՝ նպատակ ունենալով պարզեցնել ներկայացուցչական ծախսերի փաստաթղթավորման գործընթացը:

Վերոգրյալի կապակցությամբ նախ հարկ է նկատել, որ նախագծի ընդունման հիմնավորմամբ որևէ կերպ չի հիմնավորվել հարկման բազայի որոշման նպատակով՝ համախառն եկամտից նվազեցման ենթակա ներկայացուցչական ծախսերի առավելագույն չափերը վերանայելու անհրաժեշտությունը: Հետևաբար, պարզ չէ, թե որ խմբի հարկ վճարողների մոտ և ինչպիսի խնդիրներ են ստեղծում ներկայումս սահմանված առավելագույն չափերը, և ինչ հաշվարկների կամ դատողությունների հիման վրա է առաջարկվում նոր սահմանաչափը:

Այս առումով հարկ է նկատել նաև այն, որ օրենսգրքի ընդունմամբ շահութահարկով հարկման նպատակով՝ համախառն եկամտից նվազեցման ենթակա այն նորմավորվող ծախսերը, որոնք հարկերի վճարումից խուսափելու հնարավորություններ ձևավորելու առումով ռիսկային չեն համարվում, դադարել են համարվել նորմավորվող ծախսեր, ինչը նշանակում է, որ այդ ծախսերն ամբողջությամբ ենթակա են օրենսգրքով սահմանված կարգով համախառն եկամտից նվազեցման: Այս առումով, հաշվի առնելով ներկայացուցչական ծախսերի բնույթը, գտնում ենք, որ դրանց համար սահմանված թույլատրելի առավելագույն չափի բարձրացումը հարկերի վճարումից խուսափելու հնարավորությունների ձևավորման և արդյունավետ հարկային վարչարարություն իրականացնելու տեսանկյունից ռիսկային է: Նշված ռիսկերը, սակայն, նախագծի ընդունման հիմնավորմամբ բացահայտված չեն, և դրանց կառավարման լուծումները տրված չեն: Այդ մասին է վկայում նաև պետական գրանցման կամ հաշվառման տարվա համար ներկայացուցչական ծախսերի առավելագույն սահմանաչափի առհասարակ չկիրառելու առաջարկությունը, քանի որ վերջինիս ընդունումն անխուսափելիորեն հանգեցնելու է հարկումից խուսափելու ռիսկերի ձևավորման:

Ինչ վերաբերում է հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոններով ներկայացուցչական ծախսերը փաստաթղթավորելու առաջարկությանը, ապա հայտնում ենք, որ օրենսգրքով հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնն արդեն իսկ կարող է

համարվել ծախսը հիմնավորող հաշվարկային փաստաթուղթ, եթե վերջինս պարունակում է օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը (տվյալները): Եթե առաջարկությունը ենթադրում է ներկայացուցչական ծախսերի փաստաթղթավորում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոններով (այդ թվում՝ արտերկրում տրամադրվող հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոններով)՝ անկախ օրենսգրքի 381-րդ հոդվածով սահմանված՝ վերոնշյալ տվյալները պարունակելու հանգամանքից, ապա այն ընդունելի չէ, քանի որ առանց այդ տվյալների հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը կդառնա ոչ լիարժեք և միակողմանի հաշվարկային փաստաթուղթ, որի պարագայում հնարավոր չէ հավաստիանալ, թե ով է եղել ապրանք ձեռք բերողը կամ ծառայություն ստացողը և առհասարակ ինչ գործարք է կատարվել: Բացի այդ, արտերկրում շահագործվող հսկիչ դրամարկղային մեքենաների կտրոնները ինտեգրված չեն հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգին, առկա չէ դրանց ֆիսկալային հիշողության նկատմամբ հսկողություն իրականացնելու որևէ հնարավորություն, հետևաբար միշտ առկա է ռիսկ, որ դրանք կարող են լինել իրական գործարքներով չհիմնավորված հաշվարկային փաստաթղթեր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունները համարում ենք աննպատակահարմար:

***3. Ուսումնական դասընթացների անցկացման ընթացքում հանրակրթական և դրանց հավասարեցված այլ ուսումնական հասարայությունների աշակերտներին և աշխատակիցներին սննդի իրացման դեպքերում հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր չհամարվելու առաջարկության վերաբերյալ***

Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է սահմանել, որ ուսումնական դասընթացների անցկացման ընթացքում հանրակրթական և դրանց հավասարեցված այլ ուսումնական հաստատությունների աշակերտներին և աշխատակիցներին սննդի իրացման դեպքերում հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր չէ:

Նախագծի ընդունումը հիմնավորվում է այն հանգամանքով, որ կրթական հաստատություններն ունեն առանձնահատկություններ, օրինակ՝ դպրոցում ընդմիջման ժամերին հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը բավական նվազեցնում է գործընթացի արդյունավետությունը:

Վերոգրյալի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

1) ՀՀ կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականության հիմնական ուղղություններից է տնտեսությունում իրականացվող գործարքների ամբողջական

փաստաթղթավորման մշակույթի ներդրումը: Այս առումով հայտնում ենք, որ առաջարկությունը հակասում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականության վերոնշյալ ուղղությանը, քանի որ դրա ընդունումը նպաստելու է ստվերային շրջանառությունների ավելացմանը:

2) Օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը կիրառվում է ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունքի ձեռքբերումը, իսկ օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը (տվյալները) պարունակելու դեպքում՝ նաև ապրանքի ձեռքբերման, աշխատանքի ընդունման և (կամ) ծառայության ստացման գծով ծախսի ճանաչումը, ինչպես նաև ձեռք բերված ապրանքի տեղափոխությունը փաստաթղթավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ հայտնում ենք, որ հասկանալի չէ, թե առաջարկության ընդունման դեպքում ինչպես պետք է իրականացվի սննդի իրացումից եկամտի ստացման իրավունքի ձեռքբերման փաստաթղթավորումը, հետևաբար նաև՝ հարկային պարտավորությունների հաշվարկման ճշտության նկատմամբ հսկողությունը:

3) Հարկ է նկատի ունենալ նաև այն, որ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են տնտեսավարող սուբյեկտների և սպառողների միջև կատարվող՝ ապրանքների վաճառքի (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) գործարքների ժամանակ ծագող հարաբերությունների, սպառողների կողմից պատշաճ որակի և սպառողների կյանքի ու առողջության համար անվտանգ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձեռքբերման, սպառողների շահերի պետական և հասարակական պաշտպանության իրավունքների հետ կապված հարաբերությունները: Այս առումով հայտնում ենք, որ հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը և հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի տրամադրումը կարևորվում է ոչ միայն ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունքը կամ սահմանված դեպքում ծախսի ճանաչումը կամ ապրանքի տեղափոխությունը փաստաթղթավորելու տեսանկյունից, այլ նաև վերոնշյալ հարաբերությունների մասով սպառողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Հետևաբար, առաջարկությունը խնդրահարույց է նաև սպառողների իրավունքների պաշտպանության առումով:

4) Ներկայացված առաջարկությունը չի բխում հարկման հավասարության և արդարության սկզբունքներից, քանի որ առաջարկության ընդունումը կնշանակի, որ միևնույն



տեսակի գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ կիրառվում են տարբերակված մոտեցումներ: Մասնավորապես՝ առաջարկության ընդունման դեպքում կստացվի, որ հանրակրթական և դրանց հավասարեցված այլ ուսումնական հաստատությունների աշակերտներին և աշխատակիցներին սննդի իրացման դեպքերում հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր չէ, իսկ օրինակ՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին և աշխատակիցներին սննդի իրացման դեպքերում հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է:

Առաջարկությունը կարող է նախադեպ հանդիսանալ նաև այլ դեպքերում նույնպես (օրինակ՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին և աշխատակիցներին սննդի իրացման կամ ուսանողներին պատճենահանման ծառայությունների մատուցման) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր չհամարելու համար, ինչը նպատակահարմար չէ:

4. Այդուհանդերձ, նախագծի վերաբերյալ հարկ ենք համարում նշել, որ նախագծի՝

1) 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ օրենսգրքի 4-րդ հոդվածի 63-րդ կետի՝

ա) «ե» և «ժ» ենթակետերի դրույթները կրկնում են միմյանց. այս առումով օրենսգրքի 63-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել և նշյալ կետից հանել «ժ» ենթակետը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջները, մասնավորապես այն, որ նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները և ներքին հակասությունները,

բ) «թ» ենթակետում նախատեսվում է «հարկային ռեժիմ» հասկացությունը. այս առումով հստակեցման կարիք ունի «հարկային ռեժիմ» հասկացության իրավական բովանդակությունը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում օգտագործվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, կամ այլ նորմատիվ ակտով տրված է այդ հասկացությունների կամ տերմինների այլ սահմանում, ապա տվյալ ակտով տրվում են այդ ակտի էությունից բխող դրանց սահմանումները. հետևաբար, «հարկային ռեժիմի վերաբերյալ տեղեկատվությունը» հասկացությունը հստակեցման և պարզաբանման կարիք ունի՝ նկատի ունենալով ՀՀ օրենսդրությամբ ամրագրված իրավական որոշակիության սկզբունքը.

2) 3-րդ հոդվածում «կետը» և «ենթակետով» բառերն անհրաժեշտ է համապատասխանաբար փոխարինել «մասը» և «կետով» բառերով՝ հաշվի առնելով օրենսգրքի 380-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները, ինչպես նաև անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օրենսգրքի 380-րդ հոդվածի 3-րդ մասն արդեն իսկ ունի 12-րդ կետ, հետևաբար օրենսգրքի 380-րդ հոդվածի 3-րդ մասն անհրաժեշտ է լրացնել 13-րդ կետով:



30 մայիսի 2019 թվականի N 644 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ  
(ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-114-23.04.2019-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մայիսի 30  
Երևան



Պ-114-23.04.2019-ՏՀ-011/0

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 63-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

...

63) հարկային գաղտնիք՝ հարկ վճարողի, հարկ վճարողի գործունեության վերաբերյալ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի ստացած ցանկացած տեղեկություն, բացառությամբ՝

ա. հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների,

բ. հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության,

գ. հարկ վճարողի կանոնադրության մեջ ներառվող տեղեկությունների,

դ. հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունների,

ե. հարկ վճարողի կամ հարկ վճարողի գործունեության վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային կամ մաքսային մարմիններին ներկայացվող տեղեկությունների,

զ. հարկ վճարողի կողմից հայտարարագրված աշխատողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության,

է. հարկ վճարողի եկամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը,

ը. հարկ վճարողի կողմից վճարված հարկերի և տուրքերի, ինչպես նաև ակտիվների վերաբերյալ տեղեկատվությունը,

թ. ընկերության հարկային ռեժիմի վերաբերյալ տեղեկատվությունը,

ժ. հարկ վճարողի կամ հարկ վճարողի գործունեության վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային կամ մաքսային մարմիններին ներկայացվող տեղեկությունների:

**Հոդված 2.** Օրենսգրքի Հոդված 116-ի 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ:

1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չի նվազեցվում ներկայացուցչական ծախսերի այն մասը, որը գերազանցում է հարկային տարվա համախառն եկամտի 1 տոկոսը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի: Ընդ որում, այս մասով որպես ներկայացուցչական ծախսերի հիմք կարող է հանդիսանալ նաև ՀԴՄ կտրոնի առկայությունը:

2. Պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման հարկային տարվա հարկման բազան որոշելիս համախառն եկամտից նվազեցման ենթակա

ներկայացուցչական ծախսերի առավելագույն թույլատրելի մեծությունը հաշվարկելու առումով հարկային տարվա համախառն եկամտի 1 տոկոսի սահմանափակումը հաշվի չի առնվում:

**Հոդված 3.** Օրենսգրքի 380-րդ հոդվածի 3-րդ կետը լրացնել 12) ենթակետով ուսումնական դասընթացների անցկացման ընթացքում հանրակրթական և դրանց հավասարեցված այլ ուսումնական հաստատությունների աշակերտներին և աշխատակիցներին սննդով ապահովման:

## **ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

### **«ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

#### **Հարկային գաղտնիքի մասով**

Նախագծի 1-ին հոդվածով հաշվետվողականության և թափանցիկության բարձրացման նպատակով առաջարկվում է մեծացնել հանրային տեղեկատվության շրջանակը: Գաղտնիք չէ, որ ներկայումս հարկային օրենսգրքով, օրինակ ընկերությունում գրանցված աշխատողների թվաքանակը դիտվում է, որպես հարկային գաղտնիք:

#### **Ներկայացուցչական ծախսերի մասով**

Նախագծի 2-րդ հոդվածի մասով: Ներկայումս ներկայացուցչական ծախսերի նվազեցման մասով կիրառվում են երկու սահմանաչափեր 0.5 տոկոս, բայց ոչ ավելի քան 5 միլիոն դրամը: Նախագծով առաջարկվում է ներկայացուցչական ծախսերը սահմանափակել միայն տոկոսային հարաբերակցությամբ (համախառն եկամտի 1 տոկոսի չափով) և դրա համար անհրաժեշտ փաստաթղթավորումը պարզեցնել մինչև ՀԴՄ կտրոնի առկայությունը:

#### **ՀԴՄ-ի կիրառության մասով**

Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվում է ընդլայնել բացառությունների շարքը, դրանում ներառելով ուսումնական հաստատությունների աշակերտներին և աշխատակիցներին սննդով ապահովումը: Հիմնավորումը կայանում է նրանում, որ կրթական հաստատությունները ունեն յուրահատկություններ և օրինակ՝ դպրոցում ընդմիջման ժամանակ ՀԴՄ-ի կիրառությունը բավական նվազեցնում է գործընթացի արդյունավետությունը: